ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---- դեկտեմբերի 2009 թ. N ---Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի «Երևան քաղաքում տեղական տուրքերի և վճարների 2010 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» N 46-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

   1) որոշման 1-ին կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի N 1 և N 2 հավելվածների 1-ին գոտուց հանել ստորև նշված բառերը՝

Արաբկիր	Ա. Խաչատրյան փող.
Արաբկիր	Գյուլբենկյան փող.
Արաբկիր	Գրիբոյեդովի փող.
Արաբկիր	Մամիկոնյանց փող.
Արաբկիր	Վրացական փող.
Արաբկիր	Բաբայան փող.
Դավթաշեն	Իոսիֆյան փող
Նոր Նորք	Գյուլիքևխյան փող.
Շենգավիթ	Մանանդյան փող.
Շենգավիթ	Մանթաշյան փող.
Շենգավիթ	Արագածի փող.
Շենգավիթ	Եղբայրության փող.
Քանաքեռ-Զեյթուն	Ներսիսյան փող.

   2) որոշման 1-ին կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի N 1 և N 2 հավելվածների 2-րդ գոտին լրացնել ստորև նշված բառերով՝

Արաբկիր	Ա. Խաչատրյան փող.
Արաբկիր	Գյուլբենկյան փող.
Արաբկիր	Գրիբոյեդովի փող.
Արաբկիր	Մամիկոնյանց փող.
Արաբկիր	Վրացական փող.
Արաբկիր	Բաբայան փող.
Դավթաշեն	Իոսիֆյան փող
Նոր Նորք	Գյուլիքևխյան փող.
Շենգավիթ	Մանանդյան փող.
Շենգավիթ	Մանթաշյան փող.
Շենգավիթ	Արագածի փող.
Շենգավիթ	Եղբայրության փող.
Քանաքեռ-Զեյթուն	Ներսիսյան փող.

3) որոշման 1-ին կետի 11-րդ ենթակետի «10000» թիվը փոխարինել «1000» թվով:

4) որոշման 1-ին կետի 13-րդ ենթակետի «բ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«բ. 501-ից-1500 քառակուսի մետր մակերեսի համար 500.000 դրամ գումարած 500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 500 դրամ:

1500 քառակուսի մետր մակերեսից սկսած 1000000 դրամ գումարած 1500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 50 դրամ»:

5)որոշման 1-ին կետի 14-րդ ենթակետի «բ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«բ. 501-ից-1500 քառակուսի մետր մակերես ունեցող հողամասի համար 250.000 դրամ գումարած 500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 250 դրամ:

1500 քառակուսի մետրից ավելի մակերես ունեցող հողամասերի համար 500.000 դրամ գումարած 1500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 50 դրամ»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Երևան քաղաքի ավագանու անդամներ Գ.Գասպարյան

Պ. Փլավչյան